1000 խոշոր հարկատուների կողմից 2020թ. հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2020թ. հունվար-մարտ ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է շուրջ 246 մլրդ դրամ, ինչը 11.3%-ով ավելին է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Հունվար-մարտ ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2020թ. առաջին 3 ամիսներին, նախորդ երկու տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ, աճել է նաև 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը: Այսպես, 2020-ի հունվար-մարտ ժամանակահատվածում 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 151 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 26 մլրդ դրամով կամ մոտ 12%-ով (գծապատկեր 2): 100 խոշոր հարկատուները, 2018թ. համեմատ, վճարել են 40 մլրդ դրամով ավելի հարկ:



Գծապատկեր 2. Հունվար-մարտ ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

Ավելացել է նաև 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը: Այսպես, ցանկի վերջին հարյուրյակում գտնվող հարկատուների վճարումները 2020թ. հունվար-մարտ ամիսներին կազմել է 3.9 մլրդ դրամ՝ 2019-ի 3.6 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2020թ. առաջին 3 ամիսների համար կազմել է 39 անգամ, նախորդ տարի՝ 38 անգամ, 2018-ին՝ 41 անգամ: Առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2020-ին 171 անգամ է, ինչը ևս ավելի փոքր է, քան նախորդ տարիներին գրանցված հարաբերակցությունը (գծապատկեր 4): **Սա որոշակիորեն վկայում է 1000 հարկատուների ցանկում ստորին հորիզոնականներ զբաղեցնող**

ընկերությունների տնտեսական ակտիվության առաջանցիկ աճի մասին. փոքր ընկերությունները աճում են ավելի արագ, քան խոշորները:



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

2020թ. հունվար-մարտ ամիսների արդյունքներով ՀՀ-ում գործող 47 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2019-ին այդպիսի ընկերությունների թիվը 38 էր, իսկ 2018-ին՝ 28: Նույն կերպ, 2020-ի հունվար-մարտ ամիսների արդյունքներով, 90 ընկերության հարկային վճարումների գումարը գերազանցել է 500 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի ընկերությունների թիվը 80 էր, 2018-ին՝ ընդամենը 57:



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

Հետաքրքրական է, որ 2018թ. առաջին երեք ամիսների արդյունքներով, 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների 458-ը վճարել է 50 մլն դրամից պակաս հարկ: 2019-ին այդպիսի ընկերությունների թիվը արդեն 286 էր, իսկ 2020-ին՝ 251 (գծ. 5): Ավելին, 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2020թ. առաջին եռամսյակում պետք էր վճարել առնվազն 37 մլն դրամի հարկ, 2019-ին՝ 33 մլն դրամից մի փոքր ավելի, իսկ 2018-ին՝ դրա համար բավարար կլիներ ընդամենը 25.1 մլն դրամի չափով հարկային պարտավորության կատարումը:

2020-ի հունվար-մարտ ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 48 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 100 մլն դրամը, նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 49 էր, իսկ 2018-ին՝ միայն 36: Նույն կերպ, 107 ընկերության կողմից վճարված եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը, իսկ 2019-ին այդչափ եկամտային հարկ վճարած ընկերությունների թիվը կազմել է 102, իսկ 2018-ին՝ ընդամենը 67 (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի ավելացումը: 2020թ. առաջին եռամսյակում 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 35.7%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 35.2% էր, 2018-ին՝ ընդամենը 31.7% (գծապատկեր 7):

1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 35.1%-ը ուղղակի հարկերն են: 2019-ին այս ցուցանիշը եղել է ընդամենը 31.2%:



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2020թ. հունվար-մարտ ամիսներին 15 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամը գերազանցող ուղղակի հարկեր: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի ընկերությունների թիվը 16 էր, իսկ 2018-ին՝ 10:

2020թ. առաջին երեք ամիսների արդյունքներով, 33 ընկերության ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 500 մլն դրամը: Երկու տարի առաջ՝ 2018-ին, կար այդպիսի ընդամենը 20 հարկատու, իսկ 2017-ին՝ 6 հարկատու:

2020թ. հաշվետու ժամանակահատվածում 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել մոտ 150 ընկերություններ, 2019-ին հանրապետությունում գործել է այդպիսի 142 ընկերություն, 2018-ին՝ 98 ընկերություն (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2020թ. հունվար-մարտ ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական ընկերության՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը զգալիորեն տարբերվում են նախորդ տարիների պատկերից:

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2020-ի առաջին եռամսյակում վճարել է 1.51 մլրդ դրամի հարկ (2019-ին՝ 1.35 մլրդ դրամ, 2018-ին՝ 1.11 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 250 մլն դրամ (2019-ին՝ 170 մլն դրամ, 2018-ին՝ 155 մլն դրամ), եկամտային հարկը՝ 280 մլն դրամ (2019-ին՝ 250 մլն դրամ, 2018-ին՝ 182 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ շուրջ 700 մլն դրամ (2019-ին՝ 625 մլն դրամ, 2018-ին՝ 505 մլն դրամ), ակցիզային հարկը՝ 215 մլն դրամ (2019-ին՝ 167 մլն դրամ, 2018-ին՝ 106 մլն դրամ):

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2020թ. առաջին երեք ամիսների արդյունքներով վճարել է 39 մլն դրամի հարկ (2019-ին՝ 36 մլն դրամ, 2018-ին՝ 27 մլն դրամ), շահութահարկը՝ 4.3 մլն դրամ (2019-ին՝ 3.5 մլն դրամ, 2018-ին՝ 2.7 մլն դրամ), եկամտային հարկը՝ 10.8 մլն դրամ (2019-ին՝ 11.6 մլն դրամ, 2018-ին՝ 8.2 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 20 մլն դրամ (2019-ին՝ 16 մլն դրամ, 2018-ին՝ 12 մլն դրամ):

Աղյուսակ 1-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ զբաղեցրած մի շարք ընկերությունների կողմից հունվար-մարտ ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2018-2020թթ. ընթացքում: Կարելի է նկատել, որ ցանկի վերին հորիզոնականում հատկապես մշակող արդյունաբերության առանձին ընկերությունների կողմից վճարվող հարկերի ընդհանուր մեծության զգալի աճ կա: Նկատելի է նաև հանքահումքային արտադրանք թողարկող հարկատուների դիրքերի որոշակի թուլացումը, ինչը հանքագործական արտադրանքի համաշխարհային գների անկման պայմաններում լիովին տրամաբանական է դիտվում: Ցանկի առաջատար «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ընկերությունը 2019-ի առաջին եռամյսակի համեմատությամբ զգալիորեն ավելացրել է վճարված հարկերի գումարը, մյուս կողմից՝ կրճատում է գրանցվել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ընկերության դեպքում: Եվ ընդհանրապես, կարելի է արձանագրել, որ խոշոր հարկատուների ցանկում վերին հորիզոնականներ զբաղեցրած ընկերությունների մոտ 2/3 մասը նախորդ տարվա

համեմատությամբ ավելացրել է հարկային վճարումները, իսկ 1/3-ի մոտ առկա է կամ նվազում, կամ անփոփոխ մակարդակ:

Աղյուսակ 1. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը

Տեղը խոշոր հարկ. ցանկում	Կազմակերպության անվանումը	2018	2019	2020
1	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	14	13,6	17,8
2	«ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»	8,1	12,8	15,3
3	«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ»	2	4	5,4
4	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ»	3,8	3,8	4,3
5	«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»	1,6	0,2	3,9
6	«ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	4,1	6,7	3,5
7	«ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	1,1	1,1	3,5
8	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»	2,6	4,5	3,4
9	«ՖԼԵԾ»	2,5	3,7	3,2
10	«ԱԿՎԻԼՈՆ ԹՐԵՅԴ»	0,3	3,4	2,97
11	«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ»	2,5	4,3	2,8
12	«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»	1,7	2,4	2,5
13	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՏՐԱՆՍԳԱԶ»	2	1,7	2,2
14	«ՄԱՔՍ ՊԵՏՐՈԼ»	0,3	2,6	2,15
15	«ՍԻԹԻ»		1,6	2,1
16	«ՅՈՒՔՈՄ»	2,5	2,1	1,96
17	«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ»	1,3	0,5	1,9
18	«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ	1,7	2,8	1,9
19	«ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ»		1,3	1,7
20	«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ»	0,7	0,9	1,7
21	«ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»	0,8	1,4	1,7
22	«ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ»	1,4	1,5	1,5
23	«ՌԵՆԿՈ Ս.Պ.Ա» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	0,45	0,15	1,5
24	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	0,4	1,36	1,5
25	«ՕՆԻՐԱ ՔԼԱԲ»	1,2	1,2	1,5
26	ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ	1,5	1,1	1,5
28	«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ»		1,1	1,34
32	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ	1	1,28	1,23

Ամփոփում

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2020թ. հունվար-մարտ ամիսների արդյունքներով որոշակի ծավալային և կառուցվածքային փոփոխություններ է արձանագրել՝ նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 246 մլրդ դրամ, նախորդ տարվա համեմատությամբ աճել է 11.3%-ով, իսկ 2018-ի համեմատությամբ՝ 37.4%-ով,
- ✓ 1000 խոշորագույն հարկատուների ցանկի ընկերությունների 82%-ը գրանցված է Երևանում, դրանց կողմից վճարվել է 206.5 մլրդ դրամի հարկ, ինչը կազմում է ցանկում ներառված բոլոր հարկատուների կողմից վճարած հարկերի 84%-ը:
- ✓ 100 խոշորագույն հարկատուների կողմից վճարվել է 151 մլրդ դրամի հարկ, որը 16 մլրդ դրամով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, իսկ 2018-ի մակարդակը գերազանցում է մոտ 40 մլրդ դրամով,
- ✓ 1000 հարկատուների ցանկում ներառված 100 ամենափոքր ընկերությունները 2020-ի առաջին երեք ամիսներին վճարել են 3.9 մլրդ դրամ կամ նախորդ տարվա համեմատությամբ՝ 9%-ով ավելի,
- ✓ 1000 հարկատուների ցանկում ներառված ընկերությունների վճարած հարկերի անհամաչափության աստիճանի որոշակի նվազում է արձանագրվել: Ցանկի ամենախոշոր և ամենափոքր 10 ընկերությունների վճարած հարկերի ընդհանուր մեծության հարաբերակցությունը 2020թ. հունվար-մարտին կազմել է 171 անգամ, նախորդ տարվա 179 և 2018-ի 181 անգամի համեմատությամբ: Ամենախոշոր և ամենափոքր 100 ընկերությունների պարագայում նույն հարաբերակցությունը 2020-ին կազմել է 39, ինչը ևս զգալիորեն ցածր է նախորդ տարիների մակարդակից,
- ✓ 2020թ. առաջին եռամսյակի արդյունքներով՝
  - ՀՀ-ում գործել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր վճարած 47 ընկերություն: Նախորդ տարում այդպիսի ընկերությունների թիվը 38 էր, 2018-ին՝ 28,
  - 500 մլն դրամից ավելի հարկեր վճարած ընկերությունների թիվը 90 է (2019-ին՝ 80, 2018-ին՝ 57),
  - 1000 խոշոր հարկատուների ցանկում կան 100 մլն դրամից պակաս հարկ վճարած 251 ընկերություններ (2019-ին այդպիսիք 286-ն էին, 2018-ին՝ 458-ը),
  - 48 ընկերության վճարած շահութահարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը (2018-ին կար 16536 այդպիսի ընկերություն):
  - 107 ընկերություն գերազանցել է եկամտային հարկի՝ 100 մլն դրամի շեմը (2018-ին՝ 67 այդպիսի ընկերություն է գրանցվել),
  - ուղղակի հարկերի տեսակարար կշիռը 1000 հարկատուների ցանկում ներառված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի կառուցվածքում կազմել է 35.7% (2019-ին՝35.2%, 2018-ին՝ 31.7%),
  - 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 149 ընկերություններ (2019-ին՝ 142, 2018-ին՝ 98):
- ✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2020-ի առաջին եռամսյակում վճարել է 1.51 մլրդ դրամի հարկ (2019-ին՝ 1.35 մլրդ դրամ, 2018-ին՝ 1.11 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 250 մլն դրամ (2019-ին՝ 170 մլն դրամ, 2018-ին՝ 155 մլն դրամ), եկամտային հարկը՝ 280 մլն դրամ (2019-ին՝ 250 մլն դրամ, 2018-ին՝ 182 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ շուրջ 700 մլն դրամ (2019-ին՝ 625 մլն դրամ, 2018-ին՝ 505 մլն դրամ), ակցիզային հարկը՝ 215 մլն դրամ (2019-ին՝ 167 մլն դրամ, 2018-ին՝ 106 մլն դրամ):

- ✓ Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2020թ. առաջին երեք ամիսների արդյունքներով վճարել է 39 մլն դրամի հարկ (2019-ին՝ 36 մլն դրամ, 2018-ին՝ 27 մլն դրամ), շահութահարկը՝ 4.3 մլն դրամ (2019-ին՝ 3.5 մլն դրամ, 2018-ին՝ 2.7 մլն դրամ), եկամտային հարկը՝ 10.8 մլն դրամ (2019-ին՝ 11.6 մլն դրամ, 2018-ին՝ 8.2 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 20 մլն դրամ (2019-ին՝ 16 մլն դրամ, 2018-ին՝ 12 մլն դրամ):
- ✓ Խոշոր հարկատուների ցանկում վերին հորիզոնականներ զբաղեցրած ընկերությունների մոտ 2/3 մասը նախորդ տարվա համեմատությամբ ավելացրել է հարկային վճարումները, իսկ 1/3-ի մոտ առկա է կամ նվազում, կամ անփոփոխ մակարդակ: Ցանկի վերին հորիզոնականում հատկապես մշակող արդյունաբերության առանձին ընկերությունների կողմից վճարվող հարկերի ընդհանուր մեծության զգալի աճ կա: Նկատելի է նաև հանքահումքային արտադրանք թողարկող հարկատուների դիրքերի որոշակի թուլացումը, ինչը հանքագործական արտադրանքի համաշխարհային գների անկման պայմաններում լիովին տրամաբանական է դիտվում:
- ✓ Խոշորագույն հարկատուների շարքում 2020թ. առաջին եռամսյակում պետական բյուջե վճարած հարկերի ծավալի աճով առանձնանում են «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ընկերությունը՝ 17.8 մլրդ դրամ (նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ՝ +4.2 մլրդ դրամ), «ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»-ն՝ 15.3 մլրդ դրամ (+2.5 մլրդ դրամ), ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ»-ը՝ 5.4 մլրդ դրամ (+1.4 մլրդ դրամ), «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ»-ը՝ 4.3 մլրդ դրամ (+0.5 մլրդ դրամ), «ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»-ն՝ 3.5 մլրդ դրամ (+2.4 մլրդ դրամ), «ՍԻԹԻ»-ն՝ 2.1 մլրդ դրամ (+0.5 մլրդ դրամ), «ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ»-ը՝ 1.7 մլրդ դրամ (+0.4 մլրդ դրամ), «ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»-ը՝ 1.7 մլրդ դրամ (+0.3 մլրդ դրամ), ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ-ը՝ 1.5 մլրդ դրամ (+0.4 մլրդ դրամ), «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ»-ը՝ 1.34 մլրդ դրամ (+0.24 մլրդ դրամ):